245
U-16

111

— 22 —
163753
No 122.

9614

355.48
Հ-20
895-ԱՀ

# ՀԱՄԲԱՒԹ

## Ի ԳՆԴԻՆ ՈՐՈՇԵՑԵԼՈՑ ՎԱՍՆ ԿՈՎԿԱՍԵԱՆ ՍԱՀՄԱՆԱՑ·

Արտահանեալ ՚ի Համբաւագրոյ կոչեցելոյ Московскія вѣдомости · N 76 · յամի 1826 ·՚ի Սեպտեմբերի 22 · յերես 3056, 3057, 3058 և 3059·

Թարգմանեալ յաշակերտաց Ուսումնարանին Հայոց որ ՚ի Տփխիս·

1827 —— ռմհզ·

Ի ՏՓԽԻՍ·

2004

Ի Տպարանի Ուսումնարանի Հայոց՝ ընծայեցելոյ յԱզնուականէն Գէորգայ Ներսեսեան Արծրունւոյ·

ՀԱՅ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ-ССР А.
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
5703
38

# ՀԱՄԱՌՕՏ ՏԵՂԵԿ. ՈՐՈՇՈՒՑԵԼՈՅ ՎԱՍՆ ԿՌՈՒՈՅՆ ԱՐՀԱՄԱՆԱՑ.

Թարգմանեալ ՚ի համառօտագրոց կոչեցելոց Մոսկովսկիեա Վե-դոմոստի. Համար 76, յԱմի 1826. ՚ի Սեպտեմբերի 22. յերեսս 3056, 3057, 3058, 3059.

Օրէն Պարսից կառավարութիւն Աբբաս Միրզայի՝ զոր նշանակեալ է Շահն լինել ժառանգ աթոռոյ իւրոյ եմուտ ՚ի Խանութիւնս Թալիշոյ և Ղարաբաղայ՝ որք պատկանին մեզ. մասն նր̄ էհաս մինչև ցշրջակայս Գանձակայ: Յետ ծանօթութեանց՝ հասելոց առ Գեներալ Երմոլովն, թէ այսպիսի զօրաց էր իբր 30 կամ 40 հազար: Աբբաս Միրզայ ուր և մտանէ, ջան գործէ վրդովել զՄահմետական հպատակս Ռուսաց. և գործակալք՝ առաքեալք ՚ի նմանէ ՚ի մերձակայ տեղիս, գրգռեն նոյնպէս զբնակիչս յապստամբութիւն ՚ի սէր Մահմետական կրօնի:

Այս յարձակումն եղև ՚ի ժամանակի խաղաղութեան, յորժամ ՚ի սահմանս մեր գրեթէ ոչ գոյին զօրք: Սակաւաթիւ գունդք կարգեալք միայն էին պահպանութ̄ սահմանաց՝ ոչ կարելով զդէմ ունել բազմանդամ զօրուն Պարսից, յետս չոքան յամրոցս թշնամեաց: Նոյն իսկ ապաւինութիւնն առ անեղծութիւն խաղաղութեանն եղև պատճառ, զի և մեր զօրք գտցին յանկարծելոյ մէ̄ Կովկասեան սահմանաց ցրուեալ կային ՚ի բաւական մեծ տարածութեան: Գեներալ Երմոլովն հրաման ետ նմ̄ ժողովել մերձ ՚ի Տփխիս. բայց մէ̄ հեռաւորութ̄ նոյին եկին ՚ի նշանակեալ տեղին միայն հնգետասան գունդք ( батальонъ. ) Հրամանատար գնդին սպաս է և այլոց առ ՚ի հզօր զօրութ̄ եկանել ՚ի մարտ. Այսպիսի այսպէս եղելոյ հրամանաւ և կարգաւորութ̄ նր̄ առեալ զյառաջապահ զօրս Գեներալ Մայեոր Կնեազ Մատաթովն յառաջ խաղաց յանդիման զօրութեանց Պարսից: Ի զօրաց Պարսից եղելոց ՚ի Գանձակ առաքեցան ՚ի սահմանս Շամշադինու առ իբրև 2000, յորս յարեցան և ապստամբեալք ոմանք ՚ի բնակչաց և հե-

ծե-

ծերագոյնք եկեալք յԵրեւանայ՝ որք յուղարկաւորեցին զնո-
խուցեալն ՚ի մէնջ զԷջմիածին, զԵղբայրորդին Մեծաց՝
զաւաքեալն յԱբբաս Միրզայէ ՚ի Կախեթ մի յարուցա-
նելոյ և անդ զխռովութիւն։ Կնեազ Մադաթովն՝ որ կայր ՚ի
մի գետոյն Աղստափայ զխաղցեալ զայս ամենայն գիշե-
րայն՝ յարձակեալ յանկարծուստ ՚ի մի բանակի թշնա-
մեացն։ Սակայն հասեալ նորա անդր ՚ի լուսանալ առաւօ-
տուն՝ ետես, զի Պարսիկք ելեալ ՚ի բանակէն կարգեցան
՚ի բարձրաւանդակս. Գունդն՝ որում առաջնորդէին
աղեղնաւորք. իսկ և իսկ շրջապատեաց զայնոսիկ բարձ-
րաւանդակս. Թշնամին ոչ եկաց հակառակ ինչ երկար՝
քանի մի ռմբաձգութեք թնդանօթից դարձուցին զնա
՚ի փախուստ։ Կնեազ Մադաթովն չունելով զհեծելա-
զօրս՝ չկարաց ըմբռնել զհետ Պարսից. բայց ընկալեալ մեր-
ձակայ գեղջն Հայոց՝ յարձակեալ ՚ի մի փախստէիցն՝ ապա-
նին, գերեցին զընտանիս, և աւարեցին զքանի մի երիվարս.

Յերկրին Շիրվանայ առաջին Իշխան նորա Մուս-
տափայ խան ունելով զառաջնորդութի բազմաթիւ
ամբոխից ապստամբելոց և հզօր գնդի այրուձիոյն Պար-
սից, բանակեցաւ ՚ի գիւղն Շամայ։ Գեներալ Մայիօր
Կրաբբէ վանեաց զնա ՚ի տեղւոջէ անտի զրկելով զնա
՚ի բազմաթիւ զօրաց։ Բնակիչք Շարուայ զգրգռեալք
յԱբբաս Միրզայէ՝ եկին յօգնութի Մուստափայի,
բայց և նոքա հարան և ցրուեցան կորուսանելով զբա-
զումս յինքեանց։ Աբբաս Միրզայ խորամանկեաց ապս-
տամբեցուցանել և զՏաղստան, և մին առաքեաց անդր
զՍուրխայ զառաջին խանն Խանիջ լայի, զոր արդեն
Գեներալ Մայիօր Բալան խան՝ որ յամս պիպուածս
հանդիսանայ ջերմեռանդութե և հաւատարմութե առ
Ռուսաստան։ Նա առաքեաց առ Գեներալ Երմոլովն
զօրս իւր և 300 այրուձի։ Յայնմ ժամանակի Ելձու-
շեցիք՝ հրաւիրեալք յԱբբաս Միրզայէ յապստամբութի,
զեկուցին զայնմանէ Գնդապետին ՚ի ձեռն Գեներալ
Լէյտէնանտ Տարկինեան Շամղալայի։ Մտերմութի այսր
բազմաթիւ և զինուորական ազգի երաշխաւորէ զան-
դորրութ Տաղստանայ.

Սարդարն Երեւանայ մինչև ցայժմ չէ ձեռնար-
կեալ յինչ. ասէ թէ նա սպասէ մտանելոյն Աբբաս Միր-
զայի ՚ի Գանձակ հանդերձ երեւելի մասամբ զօրաց։ Գե-
նե-

ներալ Երմոլովն տեսեալ պարապորդութիւն նոր, հրա-մայեաց յանապատին Յօռու կառուցանել զփոքրիկ ամ-րոց հողոյ, որով արգելցին յարձակմունք Պարսից և շարժմունք զօրաց մերոց կլինիցին ազատօրէն.

Ըստ համբաւոյ հնչելոյ 'ի 2 ջն Օգոստոսի հա-մարի՝ թէ զԳեներալ Մայոր Կնեազ Մէնշիկովն 'ի վերադառնալն արգելեալ են 'ի Ճանապարհին և ու-նին 'ի դիպահոցն մերձ յԵրևան. այլ այսօրէն լուրք ան-ստոյգ երևեցան. նա արդ է 'ի սահմանս մեր և սպա-սեն վաղվաղակի լինել նմա 'ի Տփխիս.

## Յայտարարութիւն.

Ո՛չ միայն պատճառ և նպատակ անակնկալ յար-ձակման Պարսից 'ի վե՛ր Ռուսական արևելեան սահ-մանաց Ռուսաց ոչ ևս է երկբայական. Յետ առաջին լրոյս զայսմանէ, կառավարութիւն մեր գրեթէ իբրև զամի մի իբրաւունս համարէր ենթեան չհաւատալ, թէ Շահն Պարսից 'ի մէջ խաղաղութեան հաստատեցելոյ երկուս-տեք երդմամբք, 'ի տեսել ընկերասիրական դաշնադրու-թեանց, չունելով զպատճառ ծանր վիճմանց, կամ զա-ռիթ դժնդատմանց՝ և առանց իրիք նախազգուշութեան յօ-ժարեալ էցէ հրամայել զօրաց իւրոց մտանել 'ի սահ-մանս մեր, տարածանել 'ի նոսա զամ արհաւիրս պա-տերազմի և ապստամբութեան. Ըստ այս կարծիք ըստ-կան խորհրդածութեան անհնին յուցաւ. Փորձ թշնա-մութեան սկսաւ ոչ արշաւանօք կիսավայրագ ազանց մե-րոց սահմանակցաց՝ որք համարէր Խանական Ղարա-ւորն ըն ազգելոյ խաղաղասէր և բարեմիտ բարուց իւ-րոց, այլ յարձակմամբ զօրաց նորին իսկ Շահին 'ի մէջ նահանգաց Ռուսաց՝ սահմանակցաց Պարսկաստանի. և առաջնորդէ նո՛ցա ոչ ոմն յերկրորդական զօրավարաց՝ որք բազմիցս ըմվլին 'ի հնազանդութէ ծայրագոյն իշ-խողին, այլ որդի Շահին նախանշանակեալն 'ի նմա-նէ ժառանգ աթոռոյ իւրոյ. նա ինքն կառավարէ զօ-րավարելով ամենեցուն, պատրելով զթեթևամիտս, հրապուրելով զկատաղիս յաղմուկ և յարիւնհեղութի. Միւս ևս հարկադրեալ եղև Ռուսաստան զզօրութիւն վանել զօրութբ, և պատերազմի պատասխանել պատե-

րազ-

բազմաւ։ Արդ սպառազինեալ մի վախճան տալոյ վեր-
կրեալ երկպառակութեան, պարտ անձին համարէր
նա առաջի ամ Եւրոպիոյ առանց կրից հետաքննին
լինել պատճառացն՝ որք գրգռեցին զՊարսիկս ՚ի ցրել
զդաշն խաղաղութե, եթէ այսոքիկ պատճառք յայտնի
լինէին ինքեան, եթէ լինէր գտանել նուաղ առիթ ինչ
տհաճութեան և թշնամութեան։ Խորհրդարան մեր
( кабинетъ ) կարէ միայն պատկերացուցանել կար-
ճառօտ տեսութբ իւրք զընթացս գործոց մերոց և
թղթակցութեանց ը Պարսից. այս բաւական եղիցի
առ ՚ի ցուցանել աշխարհի, թէ ուր է արդարութիւն
և ուր եղծումն ամ պարաւանդութեանց հաստատե-
լոց դաշնադրութբ ըստ ամ օրինաց ազգային իրաւանց։
՚Ի սմին իսկ ՚ի ժամանակի, յորժամ յաւէրժա-
կան յիշատակաց արժանի յաղթութիւնք մարձաւորե-
ցին զհանդէս այսր օրհնեալ կապակցութեան, որ փըր-
կեաց և խաղաղեաց զԵւրոպիա, կամք եղեն տեսչութե
երկնից հանդիսացուցանել պանծալի յաջողութբք և ըզ-
գործս զօրաց մերոց ՚ի Պարսս։ Նուաճումն բազումնա-
հանգաց պատկաներոց Տէրութե Պարսից, բռնադատեաց
զՇահն ցանկալ կարճելոյ զպատերազմն. և ՚ի 12 Հոկ-
տեմբերի 1813 ամի ստորագրեցաւ դաշնադրութիւնն
՚ի Գիւլիստան, որով մի առ մի սահմանեցան փոխադարձ
կապակցութիւնք երկաքանչիւր Թագաւորութեանց։
Սահման եդաւ գիծն՝ զոր կալեալ ունէին զօրքն մեր
՚ի հաստատել զդաշնադրութիւնն. ( трактатъ )
Գլխաւոր պայմանք ՚ի կողմանէ Ռուսաց եղեն. խոս-
տումն ճանաչելոյ օրինաւոր ժառանգ Թագաւորութե
Պարսից յորդւոց Շահին զայն՝ զոր նա ինքն նշա-
նակեսցէ յաջորդ իւր, և պայման կարգելոյ յաղագս
յայտնի նշանակութեան նորոգ սահմանաց Կայսե-
րութեան զընթիւս յերկուց կողմանց կատարեալ իշ-
խանութբ նոցին։ Առաջինն յայսոցիկ դաշանց կատա-
րեցաւ մեծագոյն ճշտութբ. գիտացեալ թէ Ֆաթալի
Շահն անուանեաց զորդի իւր զԱբբաս Միրզայն ժա-
ռանգ Տէրութեան, Կայսրն մեր հաստատեաց անյա-
պաղ զայն հանդիսակէս համաձայնութբ իւրով.
՚Ի խօսիլն զսահմանաց ը առաջ եկին ինչ ինչ դուզ-
նաքեայ դժուարութիւնք. և մինչդեռ անէին խօսակ-

ցու

ցութիւնք վասն միոյն 'ի նոցանէ, զոր կոչեցաւ Ռուսաս-
տան 'ի Մեծէ Ինքնակալէ՝ որ զամս քսան և հինգ
հեղինակ եղև բաղդի նր̄ և փառաց. Բայց և այսպիսի
խօսակցութիւնք էին ապացոյցք չափաւորութե և ան-
կեղծութե քաղաքականութեանն Աղէքսանդրի Կայ-
սեր, որք էին նմա սեփական յատկութիւն։ Եւ 'ի թըղ-
թակցութիւնս ընդ Պարսից նա սաստկապէս պաշտպան
լինէր կանոնաց խաղաղասիրութե և բարեկամութեան՝
որոց զհետ երթայր և խորհրդարան նր̄ անյողդողդ
հաստատութբ̄ ում̄ 'ի գործս Եւրոպացւոց։ Պետակա-
նաց իւրոց և գործակալաց՝ եղելոց յԱրքունիան Թեհե-
րանայ հրամայէր նա հաւասար առնել յամ դիւ-
անս զՇահն, զԳահաժառանգն նր̄ և զՆախարարսն, թէ
Ռուսաստան չունի զպատուասէր դիտաւորութիւն ինչ,
թէ ցանկայ նա միայն խաղաղութեան և կատարելոյ
զպայմանսն հաստատելոյ դաշնադրութե̄ք. Եւ կառա-
վարչաց մերոց որ 'ի Սահման հրման տայր զամ փոյթ
'ի մէջ առնուլ վասն պահպանելոյ զհամաձայնութի
ը̄ Կառավարութեան Պարսից և վասն բառնալոյ 'ի
նոցանէ զամ առիթս գանգատանաց և կասկածանաց։
Սերջան̄ ընդ յառնել վիճմանց վէկ՝ զի Պարսիկք յետ
գործոց պատերազմին առին 'ի միոյ կողմանէ զերկիրն՝
որ տուեալն էր մեզ իսկական կանոնօք դաշնադրութե՝
զանկեալն 'ի մէջ Կափանաքչայ և Զուգուր գետոց.
և 'ի միւս կողմանէ մեք շրջապատեցաք զինուորական
խմբօք զաւակս տարածութիւն իմն՝ որ բաժանէ զծով-
ակն Գեղարքունւոյ 'ի շրջակայ լերանց. այլև այսու
ամենայն Աղէքսանդր Կայսր ոչ զլանայր զիրաւունս
Շահին առ այս տարածութիւն, յառաջադրելով կա̄
դարձուցանել նմա զայն 'ի դարձուցանել նր̄ զնահանգն
պատկանեալ Ռուսաստանի, և կամ թողուլ Ռուսաց
փոխանակ այնորիկ զայս տարածութիւն անպտուղ առ
ափն ծովակին, որ թէպէտ արդոյ է միայն վր̄ մօտ
լինելոյն առ ծովակն, այլ ոչ կարէ համեմատել սահմա-
նաց այնոցիկ զորս թողարն՝ ոչ լայնութ̄ և ոչ արգա-
սաւորութ̄։ Պէլխակարգութիւնք համաձայնք այնորի-
նակ բաժանման սահմանաց առաքեցան յԱրքունեաց
մերոց 'ի Պալատն Թէհերանայ. խօսակցութիւնքն յեր-
կարեցան, բայց առանց դժուութեց. յամենայն Սար-

տէ

ան 1825 ամի մերումն սկսան երկուսեք արծարծա-նել պահանջողութիւք և խորհրդածութիւք և թուէր թէ ամենեքին ունէր զեռնել վաղվաղակի առ բաւականացուցիչ վախճան, բայց ահա կարճեաց օրհասն զանդկին առուր Աղեքսանդրի առաջնոյ: Ժառանգն Նիկողոս նոր և օ-րինաց փութացաւ գնեալ երթալ օրինակի Օգոստա-փառ Նախորդին. և 'ի Յունուարի այսր ամի Գեներալ Մայիոր Կնեազ Մենշիկովն առաքեցաւ լիակատար յանձնարարութեամբ 'ի Պարսս: Թագաւոր Կայսրն հրա-մայեաց նմա յայտնել Շահին և Աբբաս Միրզայի զբաղձելն իւր յԱթոռ թագաւորութեան ամ Ռուսաց. և ծանուցանել նոցա զայնմանէ յատուկ նամակօք՝ յայտ-նեաց նոցա սրտաղէտ եղանակօք բանից զցանկութի իւր պահել հաստատութի զկարգաւորեալ դաշինս և պայահովել զ յարատեւութի խաղաղութե: Պատուէր տուաւ Կնեազ Մենշիկովին մի կարճելոյ զխնդիրս, որք մին-չեւ ցայսօր ժամանակի խափանեին զբացորոշումն սահ-մանայն, առաջարկել 'ի նորոյ մի յերկուց կողմանց յան-ձնաւ իւրացուցեալ տեղեացն, և առ առաւել եւ շահելոյ զՊարսիկս բազմապատիկ օգտիւ, և հաւատար-մացուցանել զՏէրութի նոցա մի բարեկամութեան Ռուսաց, յաւելուլ ևս նահանգին՝ զոր թողեալ է մեր նոյ նաև զմասն Խանութեանն Թալիշոյ: Պարտ էր նմ ևս մնալ գրաւոր պատուիրանայն յանձնեցելոյ իւրեան առաջարկել Շահին և Ժառանգի նոր՝ թէ քանի՝ չափա-ւոր և անշահախնդիր են դիտաւորութիւք Թագաւորի և Կայսերն. յիշատակել մի կարգաւն նոր՝ որ պարտ է լինել միշտ ամեն փահան արդարութե. ցուցանել նմ թէ անձուկ և մտերիմ կապակցութի Ռուսաստանի և Պարս-կաստանի միօրինակ օգտակար է վասն երկաքանչիւր Թագաւորութեց. թէ մի այնորիկ պարտ է հերքել զամ անհիմն կասկածանս. միով բանիւ՝ թէ Կայսերական Մեծութի նորին զօրով հաւատարիմ ամենդապահ կանոնաց և օրինակի անմոռանալի Նախորդին իւրոյ, կամի և պահանջէ միայն զճիշդ պահպանութի պայմանադրու-թեանցն 'ի Կիւլիստան.

Նա այսպիսի առաջադրութեց, այսքան մեծա-հոգի դիտաւորութի յայտարարութեց Պալատն Թէհ-րանայ պատասխանեաց գործովք թշնամութե. Նախ-քին.

ընթաց ուղարկեալը գործոց նորին մատամբ իւիք յայտնի են արդէն իսկ։ Ընդ. առաջ եղեն Իշխան Մէնշէ-կովլէ ամ նշանօք մեծագոյն յարգութեանց. 'ի Թաւրէժեցայց նմ Աբբաս Միրզային զամ զյարգ, զոհբ և զնամակ խաղաղութե։ Յետ այնորիկ Շահն հրաւիրեաց զնա վաղվաղակի 'ի Սուլթանիա 'ի բանակ իւր առ 'ի կատարել զյանձնարարութին Թագաւորի և Կայսեր։ Բայց 'ի մէնն իսկ ժամանակի ամ Պարսկաստան դրդեցաւ յանկարծակի. Աբբաս Միրզայն աճապարեաց 'ի Սուլթանիա յառաջ քան զդեսպան մեր. զոր Շահն մերժեցան 'ի սահման մեր. զօրականք մեր դաւանեցինք ընդէն յարուց կրթեալ է այն զօրս անակնկալելի, ստիպեցան դառնալ է կրունկն և թշնամին զկնաւ 'ի սահմանս Ռուսաց։

Խնդրեալ զայս դժբաղդութե դաշնադրութեց Թագաւոր Կայսրն զառաջինն ընծայեաց զայն կամակորութե մրոյ ուրուք 'ի Խանից՝ եղելոյ է Եշխանութե Շահին Պարսից անհամաձայն նորին դիտաւորութեց. և հրամայեաց անյապաղ պահանջել մինչ ընկենուլ և պատժել զՍարդարն Երեւանայ, զոր մեք համարէաք պատճառ ամ. Բայց Ճշմարտութին յայտնեցաւ յառաջ քան զժամանել այսորիկ հրամանաց 'ի Սիրա, զորս կատարել յայնմ հետէ էր անհնարին։ Աբբաս Միրզայն դարձաւ 'ի Սուլթանիոյ և ինքն կալաւ զգլխաւորութին 'ի վը զօրաց Պարսից։ Յառաջ նա զՄասն պատկանեալ Ռուսաց 'ի սահմանաց Խանութեանն Կարաբաղու, խռովեցոյց զբնակիչսն, առաջեաց զզօրծակալս և 'ի մերձակայ գաւառս առ 'ի հրապուրել զՄահմետական հպատակս մեր յապստամբութին և համբաւել յամ ուրեք՝ թէ նպատակ այսր պատերազմի՝ է վը հանդիսացուցանելոյ զկրօնն Մահմետական։

Այսքան յայտնի արհամարհութեց. այսքան անլուր մոլեգնութեց ամ պարտաւորութեց 'չէ՛ պարտ մնալ անպատիժ։ Թագաւոր Կայսրն յայտնէ զպատերազմ՝ Շահին Պարսից. յայտնէ՝ թէ Պարսիկք եղծին զդաշնադրութին 'ի Գիւլիստան, և թէ ոչ դիցէ ինքն զէնս մինչև ոչ ապահովացուսցէ կատարելապէս զանդորրութի սահմանաց մերոց, վարձատրելով զինքն վասն կորստեանց և զրկանաց կարգաւորութեամբ հաստատուն խաղա-

ղու-

ղութեան՝ որ լինիցի համեմատ արժանաւորութեանց Կայսերութեան։

Տուեալ եղեւ 'ի Մոսկով 'ի 16 Սեպտեմբերի . 1826.

---

Գեներալ օտ Ինֆանտերիէ Երմոլովն ծանուցանէ Նորին Կայսերական Մեծութե 'յ 7 այսր ամսոյ՝ Թէ Գեներալ Մայեօր Կնեազ Մատաթովն 'յ2 Սեպտեմբերի յարձակեցաւ 'ի վր Պարսից՝ կացելոց յաջ- կոյս եզեր Շամքօր գետոյն։ Թշնամեացն գունդ բաղ- կանայր 'յ 2000 կանոնաւոր (регулярный) հետեւակ զօ- րաց եւ եւս 'յ 8000 հեծելոց, համդերձ 4 մեծամեծ Թնդանօթովք եւ 20 փոքր Թնդանօթովք զետեղելովք 'ի վր ուղտուց. զօրապետն էր Մահմատ Միրզայ որ- դի՝ եւ Ամիր Խան Սարդար քեռի՝ ժառանգի Շահի Աբբաս Միրզայի եւ այլք յերեւելեաց Պարսից։ Յա- ռաջապահ գունդ Թշնամւոյն տեսեալ 'ի հեռուստ ըղ- զօրս մեր՝ յարդարեալ 'ի մարտ, սպասէր մերձենալոյ նց։ 4 Թնդանօթք Թշնամեաց՝ արձակեալք զոյգ ընդ հրացանից հնչեցուցին զբաւական ուժգին բոմբիւն։ Մատակոցն շինեալ 'ի մեր կողմանէ լռեցոյց զԹշնա- մեացն եւ պատճառեաց զմեծամեծ վնաս 'ի գունդս այրուձիոյն Պարսից, որք խուճապեցան 'ի փախուստ զհետ երթեալ Մահմատ Միրզային՝ որ 'ի խնդիր էր վրիպութե անձին իւրոյ։ Հետեւակախումբն մնաց ա- ռանց օգնութե. եւ հեծեալք մեր՝ բաղկացեալ 'յ 800 Կրաց եւ 'ի Թաթարաց ոմանց բնակչաց Ղազախ կոչե- ցեալ Նահանգին, որպէս զհետ պնդեալ փախստէիցն՝ փակեցին զանցս նց։ Յայնժամ դասակք խումբք Թըշ- նամւոյն շփոթեալ խոյս եւ աճապարեալ հազիւ ու- րեմն կարացին առ փոքր մի զդէմ ունել, որոց անդա- դար զհետ պնդեցան մերքն աւելի քան զ 10 ասպարէզ։

Յայսմ պատերազմի 'ի կողմանէ Թշնամեաց ան- կան երկու Խանք * եւ աւելի քան հազար զինակիրք մեռ-

---

* Մին յերկուց Խանից էր Ամիր Խան Սարդար Քեռին Աբբաս Միրզայ Ժառանգի Շահին.

մնացին 'ի տեղւոջ։ Առան մի մեծ թնդանօթ և 11 փոքր թնդանօթք՝ ղումբարայք կոչեցեալք. և քանի մի արկեղք վառօդոյ.

Յետ այսորիկ Կնեազ Մատաթովն դիմեաց 'ի Գանձակ՝ որում և տիրեաց 'ի 4 Սեպտեմբերի առանց իրիք ընդդիմութեան։ Որքան և փութացոյց նա զչու իւր յետ հարկանելոյ զթշնամին առ Շամքօռ գետովն, 1500 ուսեալ հետևակազօրք Պարսից եղեալք յամրոցի անդ. ելին 'ի քաղաքէն չպասեալ գալստեան զօրաց մերոց։ Հարուածեալն 'ի Սեպտեմբերի 2 Թըշնամին ոչ միայն չմնաց մերձ 'ի քաղաքն, այլ թէ տեսին զնա մեծագոյն խուճապաւ մազապուրծ անկանել յայն կողմն Օէկմայ գետոյն, որ յայնկոյս Գանձակայ։ Առաքեալ յառաջ մինչև ցքսան ասպարէզ հեծելազօրն մեր չեգիտ և ոչ զոք. 'Ի մտանելն 'ի Գանձակ ստացան մերքն զբանակ թշնամեացն լի ամենայն ուտելեօք. 'ի դըղեկին գտաւ պաշար բազում և փոքր ինչ վառօդ և արճիճ.

Այժմ յայտարարութ. կցորդէ Գեներալ Երմոլովն թէ 'ի Գարաբաղէ սկսանին երևել Մահմետականք և Հայք, որք և հաստատեն թէ յերևել զօրացն Ռուսաց՝ զգալով բնակչացն զամ գարշունի ապստամբութեան, ունին ջանալ մաքրել զայն։ Առ այս վախճան գրեաց նա առ Գեներալ Ադիւտանտ Պասկևիչն փութանակի միաւորիլ ընդ Գեներալ Մայեօր Կնեազ Մատաթովին և դիմել 'ի Գարաբաղ.

# ՀՐԱՄԱՆ

## ԱՌԱՆՁԻՆ ԶՕՐԱՑ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՆԴԻՆ

Ի Տփխիս. Ի 26 Յուլիսի. 1826. № 25.

'Ի մտաց վերադարձայ 'ի սահմանէ Կովկասու, ուր պատժեցի զապստամբեալ Չաչանս, բայց տատանօք Գօր-

Պարսիկք տուեալ են անխիղճք, առաւելապատիւ մե-ղապատկառուք յարձակել սկսան 'ի մի զօրաց մերոց։

Նորա խրախոյսն զհայրապետութիւնն, յորժամ 'ի կող-մանէ մերմէ մի հնարք 'ի կէր ածելոյ 'ի շարունակել զբարի համաձայնութիւն։ Խրախոյսն յայնժամ, յորժամ առաքեալն 'ի Կայսերէ Գենէրալ Կնեազ Մենշիկովն վասն խօսակցութեանց 'ի մասին սահմանաց՝ դարձաւ 'ի Պարսկաստան, բարեպէս ընկալեալ եղեւ 'ի նոյն իսկ 'ի Շահէն։

'Ի կողմանէ Երեւանայ եմուտ Սարդարն համդերձ զօրօք և աւազակաբար ասպատակէ և սպառսպուռ ջնջէ զխաղաղ բնակիչս՝ զհպատակս մեծի Թագաւորին մերոյ, պղտորէ զայլս և գրգռէ 'ի դաւաճանութիւն։

Յարշաւս մտին զօրք Պարսից, և մին յորդւոց Շա-հի Աբբաս Միրզայ անուն, որ 'ի վաղուց սիրով ըն-դունէր առ ինքն զամենայն զ'ի մէնջ փախուցեալ Խանս և զայլ ապստամբս, ածէ զնոսա ը իւր, խոստանալով դարձուցանել նոցա զառաջին կալուածս իւրեանց։

Զայսպիսի կարգադրութիւնս առնէ Որդին Շա-հի, համարելով իբր թէ չիցէք դուք այտ՝ քաջ ընկե-րակիցք իմ. նա խորհի խլել 'ի մէնջ զօրութեամբ Ձերով նուաճեալ Պետութիւնս։

Աւելորդ համարիմ ասել ինչ մի քաջութեան Ձեր և անվեհերութեան, զորս ամենայն ուրեք անյողդողդ ցու-ցէք. և Երբ զօրք Ռուսաց չեղեն այնպիսիք։

Մեծ հանդիսացեալ դատայք Դուք հաւատար-մութեամբ Թագաւորին, բայց ես պահանջեմ 'ի Ձէնջ, ինքնին Ձեզ օրինակ գոլով առ նոր Թագա-ւորս՝ զնոր ջերմեռանդութիւն։

Ստացէք զհամբերութիւն և պաշտպանեցարուք անվեհեր. ես ցուցից Ձեզ ընկերք քաջամարտք, թէ երբ պարտ իցէ ածել զհարուածս 'ի վերայ Թշնամեաց Կայսեր մերոյ։

Տեսցէ Թագաւորն զվաստակ և զարդիւնս Ձեր և ցարդ 'ի Կովկասեան գնդին բազումք կան առատա-պէս 'ի Նմանէ վարձատրեալք։

Հրամանատար Առանձին Զօրուց Կովկասեան Գնդի Գենե-րալ օֆ Ինֆանտերիէ Երմոլով։